40. ԿՅՈՒՔՅՈՒՆ ՇԱՎԹԱԼԸ

Ինիս ա, չինիս մին մարթ։ Ըտրան ինիս ա մին սուրու խոխեքյ։ Մին տարե սով ա ընգնես։ Տա եր ա կնաս մին էրկու չվալ յոր ունես, քյինիս, թա դան պիրի, խոխեքյը պահե։

Շատ ա քյինիս, թա խրեգյ, էտ գյիղվալ չի, առաչը տուս ա կյաս մին բախճա։ Ցեշիս ա, տսնաս շավթալոտը լիգյը։ Ուղիս ա, թա չափարը կուտրատե, քաղե, բիշումը մին պառավ ա ինիս։

Էտ պառավը ըտրան վեր տսնաս ա, ծեն ա տաս կոշտը, թա. — Ախպեր, տու հրղրցու մարթ ըս, ամմա էն ա մթնալ ա, մրհենգյաս տենը հի՞շտեղ բեդմա քյինիս, եք էս բուգունը շավթալոտը պահե, յրես քյինիմ տոն, էքյուց ուռութանա հացտ նան ճուրըտ յոր օնիմ, կյամ, ծառերը քաղինքյ, տննական ըմ ծախիմ, հիշքան ուղիս ըս, կեր։

Էտ մարթը ռազի յա կրենըմ, քյինիս ա բախճան, պառավը ըրխյին քյինիս ա տոն։

Կյուքյին ցիրեկավ աշկա ըծես ծուերեն, տսնաս ա վե՞րն ա լավ, վերն ա փիս։ Քշերը եր ա կնաս ծառերը քղես, էրկու չվալը լըցնես, էշին պըռնես, քյինիս տոն։ Խոխեքյը ըրմնաս ըն, թա էս հինչքան մեծ-մեծ դան ա, ամմա Կյուքյին ըսես ա. — Դան չի, շավթալ ա, կերեքյ։

Խոխեքյը ուտես ըն, տսնաս մաչին կորեզ էլ օնե, վխես ըն օտին, ըսես ըն. — Էս հի՞նչ պեն ա, վեր ըստի յա։— Ախեր ըտրանց տեղերը

շավթալի ծառեր չի փսնես, ըտրա դարդան էլ ըրմնալի յա ուրանց հետե։

Տնացեր հրցնես ըն, թա.— Պա պառավը քյըեզ հո՞ւնց դավերյա ըրավ ըախճան։

Կյուքյին սկսես ա նադլ անելը.— Վեր նի մտե բախճան, պառավը պերավ միկա ինձ տվավ, թա կեր։ Ը՞ր կալի տրի պերանըմըս, մըն էլ վեր քցեցե, կասիմ. «Ըստի պենը մունք վեր օտինք, յա կմեռնինքյ, յա կպլանանք։ Պառավ, յըես տի պենեբը օտել չըմ, հալա մաչին էս ա մին պեն էլ կա, վխես ըմ տրաքե, ինձ սպանե, ծեռքըս էլ նի չըմ տա՞լ։» Պառավը հվտացալ ա, դավերյա ըրալ, ինքյը ըրխյին քյըեցալ տոն, յըես էլ քմակեն եր ըմ կացալ, քաղալ, եկալ մեր տոն։

Պառավը ուռութանա կյաս ա, տսնաս վեչ Կյուքյի կա, վեչ էլ շավթալ։ Պըլընաս ա, սկսես ծրվծրվալը, ամմա դե պենը պենան ընցած ա ինիս, ճարը կտրես ա, սուս ա ընես։